ՅՈՒՅԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 401

ՄԱՏԵԱՆ ԱՐԻՍՏՈՏԷԼԻ

Թերթերը՝ 227:—**Պրակները՝** 19, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի Ը՝ 10, Թ՝ 11 և ԺԹ՝ 14 թերթից են:—**Մեծությունը՝** 34×22,5×3,5 սմ.:—**Նյութը՝** դեղնած հաստ թուղթ:—**Կազմը՝** հասարակ բարակ ստվարաթուղթ: Կազմի վրա կա 26 համարը:—**Պահպանակները՝** բարակ սպիտակ մի թերթ սկզբում:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** Միասյուն:—**Դատարկ թղթերը՝** 224բ—227բ:—**Տողերը՝** 38—56, անկանոն:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** խառը, զանազան տեսակի և չափի նոտրգրեր:—**Զարդագրություն՝** չունի:—**Գրիչները՝** մի քանիսն են, որոնց անուններն անհայտ են:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ժամանակը՝** 17—18-րդ դարեր: **Վայրը՝** անհայտ:—**Մանոթություն՝** ձեռագիրն ստացվել է Ստամբուլից բանասեր և պատմական գիտությունների թեկնածու Հակոբ Ս. Անասյանի ձեռամբ 1973 թ. սեպտեմբեր ամսին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Վեցերորդ մատեան
Ամենից գրեանցն Արիստոտէլի.
Պատկանեալք առ ճանաչումն կենդանեաց,
ընդ զանազան մեկնութեանց ի նոյնսն:
Ավերիոսի Քոստուպէնսիոյ.
լուծմանցն ընդդիմութեանց Միքայէլի Անկէլոսի
Զիմառացւոյ. յատուկ տեղիս առակցեալք, որոց զմակագիրսն, զթիւն և զկարգն պատմէ ստորև:
Ի Վենետիկ առընթեր Իւնթոսի
ՌԵՃԱԴ (1574 թ.—Ն. Մ.):

Թ. 1բ.—Թէոդորոսի Գազայի Թեսաղոնիկեցւոյ ի գրեանս
Արիստոտէլի զկենդանեացս:
Առ Նիկողայոս Հինգերորդ մեծագոյն Քահանայապետն.
Յառաջաբանութիւն:

Թ. 4բ.—Զթէոդորոս Գազայէ՝ Հեռմօլայոս բարբարոս յառաջաբանութեան Թէմիսցիոսի մեկնութեան, առ չոր(ր)որդ Սիսթոս մեծ Քահանայապետն զայս գրէ, զմեծ և զանբաղդատելի վնաս ոչ նախ արարաք մեծագոյն քահանայապետ ի Թէոդորոս Գազայ, որ զլունական և զամենայն լաթինական արսն այսու պարգևաւ գրելոյ և թարգմանելոյ յաղթեաց: Այս եթէ երկարապէս ապրից իւր զլաթինական լեզուն ևս մասն ինչ ճոխացուցանէր, որ և արար յայտսիկ գրեանս բացարձակապէս զկենդանեացն Արիստոտէլին և մեկնուդեանցն զտոհմականացս, այս ինձ մի ստոյգ ինքեամբ հնութեամբ տեսանեցայ, զայս ինձ, որում հետևեցայ յառաջադրեցի, ի գրեանցս սորին օգնեալ իմ և խոստովանիմ և քարոզեմ: Զայս ես ոչ մեծաւ ջանիւ հետաքրքրութեամբ ընթերցայ, քան Թուլիոսի, Փլինիոսի, Քօլումէլոսի, Լաոօնոսի, Սենէքայի, Սիսլէոսի և այլոց, զորս յայսմիկ սեռի մեկնութեան մտադրութեամբ ընթեռնուլ հարկաւոր է:

Թ. 5ա.— Արիստոտէլի Ստագիրացւոյ.
զպատմութենէ կենդանեաց.
Գիրք Առաջին.
Ի Թէոդորոս Գազայ թարգմանչէ:
Որո՞վք կենդանիքն ի մէջ ինքեան տարբերին, և որովք համաձայնին և նոցին զանազանութիւն բնութեան:

(Շարունակելի)

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է-ից և Ը—Թ-ից: